ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-2260 <<18>> 09 2014թ.

Ձեր 09.09.2014թ. թիվ 2621/1457 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ ՀՀ ոստիկանության համակարգի գործող ՁՊՎ-ների վարչակազմերի մասնագիտական պատրաստվածության բարձրացման գործընթացը մշտապես գտնվում է ոստիկանության ղեկավարության ուշադրության կենտրոնում: ՁՊՎ վարչակազմերի հետ պարբերաբար անցկացվում են ծառայողական պարապմունքներ, որի ընթացքում ուսումնասիրվում են ոլորտը կանոնակարգող իրավական ակտերը և հրաման-հրահանգները:

2013թ. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների հերթապահ մասերի ու ՁՊՎ-ների ծառայողների հետ կազմակերպվել են 2 սեմինար-խորհրդակցություններ, որոնց ժամանակ ՁՊՎ-ների պատասխանատուներին տրամադրվել են մեթոդական ուղեցույցներ և խտասկավառակներ, որոնցում հակիրճ ներկայացված են ոլորտը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև դրույթներ ՄԱԿ-ի խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի դեմ Կոնվենցիայի Կամընտիր արձանագրությունից, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտեի (CPT) Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույցից հատվածներ, <<Մարդու իրավունքների պաշտպանի մասին>> ՀՀ օրենքից հոդվածներ:

ՀՀ ոստիկանության շտաբի կողմից մշակվել և ՀՀ ոստիկանության պետի ստորագրմանն է ներկայացվել <<Խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի իրավական չափանիշների կիրառումն ապահովելու մասին>> թիվ 20-Ց հանձնարարականը, որի համաձայն ոստիկանության ծառայողների կողմից անձանց բեման ենթարկելիս, ձերբակալելիս կամ այլ գործողություն իրականացնելիս՝ պետք է ապահովվի ԽԿԿ չափանիշներին համապատասխան վարքագիծ, որն իր դրական արձագանքն է ստացել միջազգային կազմակերպությունների կողմից:

2014թ. ՁՊՎ-ների և հերթապահ մասերի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերից կազմվել է <<Հարց-պատասխան>> մեթոդական ձեռնարկը և ուղարկվել է ոստիկանության ենթակա ստորաբաժանումներ՝ այն ուսումնասիրելու ու տեղերում ստուգարք հանձնելու համար:

ՀՀ ոստիկանության շտաբի նախաձեռնությամբ 2014թ-ին ՀՀ ոստիկանության բժշկական վարչության կողմից ոստիկանության մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների հերթապահ մասերի պետերի հետ անցկացվել են սեմինար պարապմունքներ, որոնց ընթացքում ուսումնասիրվել են առաջին բուժօգնության, մարմնի արտաքին զննության, ախտահանիչ նյութերի օգտագործման ձևերն ու մեթոդները և մի շարք այլ հարցեր:

Ներկայացված հաշվետվությունների ուսումնասիրությունների արդյունքում ՁՊՎ-ների գործունեության արդյունավետությունն ու անձնակազմերի մասնագիտական պատրաստվածությունը բարձրացնելու նպատակով Երևան քաղաքի և մարզային վարչությունների ղեկավարներին հանձնարարական է տրվել ակտիվացնել ՁՊՎ-ների գործունեության նկատմամբ իրականացվող ստուգումների հաճախականությունը և անձնակազմերին պարբերաբար ցուցաբերել գործնական-մեթոդական օգնություն: ՀՀ ոստիկանության շտաբի կողմից 2013թ. գործնական-մեթոդական օգնություն է ցույց տրվել ոստիկանության Երևան քաղաքի, Գեղարքունիքի, Լոռու և Արմավիրի մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների հերթապահ մասերի ՁՊՎ-ների վարչակազմերին, իսկ 2014թ.՝ Երևան քաղաքի, Արագածոտնի, Վայոց Ձորի, Տավուշի և Սյունիքի մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների ՁՊՎ-ների վարչակազմերին:

Հիշյալ գործընթացը կրում է շարունակական բնույթ և գտնվում է ոստիկանության ղեկավարության ուշադրության կենտրոնում:

ՀՀ ոստիկանության շտաբ